

ԳԱՌՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԶՆՈՒ
2016թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 43-Ն ՈՐՈՇՄԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Ա. Սահակյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 12 դեկտեմբերի 2016թ. 11 արտահերթ նիստի թիվ 43-Ն որոշմամբ

ԳԱՌՆԻ 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԱԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ---6	
3. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ.....	18
4. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ.....	19
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՄԼԱԿԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ	26
6. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ	28
7. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԶԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ	29
8. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔԻ (ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԱՄԱՍ ԵՎ ԱՅԼՆ)ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	28
9. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳ) ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՑՈՒՄԸ.....	29
10. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ.....	
11. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....	32

ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ԾՐԱԳԻՐ 1 ԽՄԵԼԱԶՐԻ ՑԱՆՑԻ ՄԱՄՆԱԿԻ ՆՈՐՈԳՈՒՄ	33
ԾՐԱԳԻՐ 2 ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԲԱՎԱՅՐՈՒՄ ԱՂԲԱԿՈՒՅՏԵՐԻ ԾԱԾԿՈՒՄ	36
ԾՐԱԳԻՐ 3 ՊՈՒՐԱԿՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ	39
ԾՐԱԳԻՐ 4 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ.....	42
ԾՐԱԳԻՐ 5 ԿԱՆԳԱՌՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ ԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԳԾԱՆՇՈՒՄ..	45
ԾՐԱԳԻՐ 6 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԶՈՒԳԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ	48
ԾՐԱԳԻՐ 7 ԶՐԱՄՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԱՊՏԱԺՆԵՐԻ ՊԱՐՍՊԱՊԱՏՈՒՄ	50

ԾՐԱԳԻՐ 8 ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ.....	52
ԾՐԱԳԻՐ 9 ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ.....	54
ԾՐԱԳԻՐ 10 ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՓՈՍԱԼՑՈՒՄ.....	57
ԾՐԱԳԻՐ 11 ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՅԿԱՑՈՒՄ	60
ԾՐԱԳԻՐ 12 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՆՈՐՈԳՈՒՄ	63
ԾՐԱԳԻՐ 13 ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՆՈՐՈԳՈՒՄ	66

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2017-2021 թթ. զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ ծրագիր:

Զարգացման ծրագիրը մշակվել է հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), Զարգացման ծրագրի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպության կողմից մշակված և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2014 թվականին հավանության արժանացած «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության»:

Ներկայացվող զարգացման ծրագիրն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Գառնի համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: Զարգացման ծրագրի բովանդակությունը պայմանավորված է զարգացման ծրագրի մշակմանը մասնակից համայնքի աշխատանքային խմբերի (այսուհետ՝ ԱԽ-երի) կողմից կատարված աշխատանքով և առաջարկներով, համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: Զարգացման ծրագրում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի կազմում ընդգրկված հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: Զարգացման ծրագիրը մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքը զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքը տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Զարգացման ծրագիրն մշակվել է մասնակցային եղանակով՝ հաշվի առնելով համայնքի շահագրգիռ բոլոր կողմերի առաջարկությունները: Հարցումների միջոցով վեր են հանվել համայնքի բնակիչներին հուզող խնդիրները, դրանք գնահատվել են բնակավայրային ժողովների ժամանակ և դասակարգվել ըստ առաջնահերթության: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և համայնքի ղեկավարին կից գործող տարեկան բյուջեի ու զարգացման ծրագրի մշակման խորհրդակցական մարմնի (ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագիրն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագիրն ներկայացնում է Գառնի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական և տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը **նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և** նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում: Զարգացման ծրագիրն ներառում է նաև Գառնի համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Գառնի համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Գառնի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիների նընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

Զարգացման ծրագիրն մշակելիս ուսումնասիրվել են նաև Գառնի համայնքի նախորդող քառամյա ժամանակաշրջանի զարգացման միտումները և դրանց շարունակականության հավանականությունը:

Զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում զարգացման ծրագրում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

Զարգացման ծրագրում ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը: համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

Զարգացման ծրագրում սահմանվում են համայնքի երկարաժամկետ տեսլականը, թե ինչպիսին ենք ցանկանում տեսնել մեր համայնքը ապագայում, ռազմավարությունը և զարգացման ծրագրի հիմնական նպատակները:

Զարգացման ծրագրում ներկայացվում են պետության և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համայնքում գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվող (շարունակվող) համագործակցության ուղղությունները:

Զարգացման ծրագրում ներկայացվում են համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք հինգ տարիների եկամտային ցուցանիշները:

Զարգացման ծրագրում ներկայացված են համայնքի զարգացման ծրագրերը: Դրանք գնահատվել են ըստ սահմանված չափորոշիչների և սահմանվել են առաջնահերթություններ: Ամփոփ ձևով ներկայացվել են առաջնահերթ այն ծրագրերը, որոնք մոտավոր հաշվարկներով ակնկալվում է, որ հնարավոր կլինի իրականացնել կանխատեսվող ֆինանսական միջոցներով: Գալիք հինգ տարիների ընթացքում իրականացման ենթակա ծրագրերը ձևակերպվել են՝ օգտագործելով ծրագրերի կազմման օրինակելի ձևը, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի

ֆինանսավորման աղբյուրները (համայնքի բյուջե, ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, այլ) և դրանց մոտավոր արժեքներն՝ ըստ գալիք հինգ տարիների:

Զարգացման ծրագրում ներկայացվում է համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների, հողամասերի կառավարման (օտարման, վարձակալության տրամադրման) հնգամյա ծրագիրը:

Զարգացման ծրագրում ներկայացվում է զարգացման ծրագրի իրականացումը, մշտադիտարկումը (մոնիթորինգը) և գնահատումը, վերահսկումը և վերանայումը:

Զարգացման ծրագրում ներկայացվում են համառոտ մոտեցումներ՝ ՀԶԾ-ի իրականացման, վերահսկման և գնահատման, ծրագրերի իրականացման արդյունքների քննարկման, զարգացման ծրագրում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման գործընթացների վերաբերյալ:

Զարգացման ծրագրում ներկայացվում է մանրամասն և լայնածավալ տեղեկատվություն տարբեր հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են համայնքի հիմնական ցուցանիշների՝ գալիք հինգ տարիների կտրվածքով գնահատում և կանխատեսում, համայնքի ոլորտային ծրագրերի՝ ըստ ծրագրերի օրինակելի ձևի ձևակերպումներ և այլն:

1. ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Գառնի պատմական գյուղը գտնվում է Կոտայքի մարզում, Երևան քաղաքից 25 կմ, մարզկենտրոնից 78 կմ հեռավորության վրա, ծովի մակերևույթից 1480մ բարձրության վրա: Գյուղը շրջափակված է Գեղամա լեռներով, որից սկիզբ է առնում Ազատ գետը: Գետի աջակողմյան եռանկյունաձև հրվանդանի վրա է Գառնի 24 բազալտյա սյուներով հրաշակերտ հեթանոսական տաճարը: Տաճարը կառուցվել է 77 թվականին և կանգուն է մնացել 1600 տարի:

1679թ.-ի հունիսի 4-ի կործանարար երկրաշարժից փլվել է:

1909-1911թթ.-ին անվանի գիտնական Նիկողայոս Մառը տաճարի հիմքի մոտ է հավաքել ցիբուցան եղած քարերը, հուսալով, որ մի օր կվերկանգնվի հրաշալի այս կառույցը: Գառնիի տաճարը վերականգնվել է ճարտարապետ Ա.Սահինյանի նախագծով և անմիջական ղեկավարությամբ 1969-1975թթ.-ին: Այո, հին է Գառնի անունը, որով կոչվել է նաև ամրոցն ու կողքի գյուղաքաղաքը: Պատմահայր Մովսես Խորենացին գրում է, որ այս բնակավայրը հիմնադրել է Հայկ Նահապետի ծոռ Գեղամը, որի թոռան Գառնիկի անունով էլ կոչվել է Գառնի: 17-րդ դարի 2-րդ կեսին Գառնի են գաղթել Մակվից:

2012թ վերակառուցվեց ազատ գետի վրա 12-րդ դարում կառուցված կամարա կամուրջը, որի անմիջական հարևանությամբ է գտնվում <<Քարերի սիմֆոնյա>> և ջութակասար բնապատմական արժեք ներկայացնող հուշարձանները: Ազատ գետի կիճը որը համարվում է ոչ նյութական արժեք և գրանցված է յունեսկոյի գրքում: Գառնի համայնքն իր մասնակցությունն է ունեցել առաջին հանրապետության ստեղծմանը, Հայրենական մեծ պատերազմից հետո չվերադարձան 361 Գառնեցիներ, Ղարաբաղյան ազատամարտում իրենց կյանքը զոհեցին 13 Գառնեցիներ: Գառնին Կարելի է ասել, բաց թանգարան է երկնքի տակ:

1980թ.-ից այստեղ անց են կացվում երգ ու պարի ամենամյա փառատոններ: Երևան-Գառնի-Գեղարդ մայրուղիով, չնայած դրա վթարային վիճակին, մեծ թվով զբոսաշրջիկներ են այցելում այս հոյակերտ տեսարժան վայրերը:

Գառնիի գյուղական համայնքի վարչական տարածքը 5762,0 հա է:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները
(01.10.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Ցուցանիշները	
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	7274
	Տղամարդիկ	3782
	Կանայք	3492
	0-4 տարեկան	416
	5-6 տարեկան	226
	7-10 տարեկան	408
	11-14 տարեկան	398
	15-17 տարեկան	295
	18-22 տարեկան	428
	23-45 տարեկան	2700
	46-62 տարեկան	1632
	63 և բարձր տարիքի	771
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	802
	Տարիքային և աշխատանքային	771
3.	Փախստականներ	0
4.	Միակողմանի ծնողագուրկ երեխաներ	28
5.	Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ	5
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	3
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	130
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	108
	Մանկուց հաշմանդամներ	5
9.	Աշխատունակներ	4650
10.	Զբաղվածներ	3890
11.	Գործազուրկներ	360
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	200
14.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	13
15.	Բնակարանիկարիքավորընտ	100

	անիքներիթիվը, այդովում`	
	Անօթևան ընտանիքներ	
16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	100
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	210
18.	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	300

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գառնի համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 11 անդամներով (ընտրված Գառնի համայնքի բնակչության կողմից 2016թ-ի հոկտեմբերի երկուսին : Գառնի համայնքի աշխատակազմը բաղկացած է 17 աշխատակիցներից :

Համայնքապետարանն ունի վարչական շենք, որը գտնվում է Գառնի համայնքի Շահումյան 4 հասցեում : Շենքի ընդհանուր վիճակը բավարար է, աշխատակազմի համար պայմանները բավարար են , կահավորանքի մի մասը նորացված է, մի մասը դեռևս 1980-ական թվականներից է: Համայնքապետարանը հագեցած է տեխնիկայով, սակայն այն բավարար չէ աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար: Համայնքապետարանի ամենամեծ սենյակը ծառայում է որպես քաղաքացիների

սպասարկման գրասենյակ, համայնքապետարանի 1-ին հարկում է գտնվում նիստերի դահլիճը:


Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 37-Ա որոշմամբ (աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Գառնի համայնքի աշխատակազմը

Հ/հ	Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մատվ նաև ծածկագիրը)	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1.	Համայնքի ղեկավար	1	1	420000
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	189000
3.	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	1	139000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
4.	Աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	1	205000
5.	Գլխավոր մասնագետ (2.3-1)	1	1	189000
6.	Գլխավոր մասնագետ (2.3-2)	1	1	189000
7.	Առաջատար մասնագետ (3.1-1)	1	1	155000
8.	Առաջատար մասնագետ (3.1-2)	1	1	155000

9.	Առաջատար մասնագետ (3.1-3)	1	1	185000
10.	1-ին կարգի մասնագետ (3.2-1)	1	1	132000
11.	1-ին կարգի մասնագետ (3.2-2)	1	1	132000
12.	2-րդ կարգի մասնագետ (3.3-1)	1	1	120000
13.	2-րդ կարգի մասնագետ (3.3-2)	1	1	120000
ՏԵԽՆԻԿԱԿԱԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐ				
14.	Քարտուղարուհի	1	1	95000
15.	Օպերատոր	2	1	95000
16.	Վարորդ	2	1	135000

Գծապատկեր 1-Ում ներկայացված է Գառնի համայնքի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը:



Համայնքային ոչ առևտրային 5 կազմակերպությունների (ՀՈԱԿ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու **2015 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 37-Ա որոշմամբ:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ <<ԳԱՌՆԻԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿՔԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ
ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ 2016ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Աշխատակիցների թվաքանակը` 17

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	<<Գառնիի երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ	Տնօրեն	Վարչական	-	1	133000			133000
2		Ուսմասվար	Վարչական	-	1	126000			126000
3		Հաշվապահ	Քաղաքացիական	-	1	72752			72752
4		Սոլֆեջո	Քաղաքացիական	-	1	72752			72752
5		Դասատու	Քաղաքացիական	-	1.5	72752			109128
		Դասատու	Քաղաքացիական	-	8	77904			623232
6		Դաշնամուր լարող	Տեխնիկական սպասարկման	-	1	72752			72752
7		Պահակ	Տեխնիկական սպասարկման	-	1	72752			72752
8		Հավաքարար	Տեխնիկական սպասարկման	-	1	72752			72752
9		Գործավար	Տեխնիկական սպասարկման	-	1	77904			77904
	Ընդամենը				17.5				1433024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ <<ԳԱՌՆԻԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿՔԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ 2016ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Աշխատակիցների թվաքանակը՝ 10

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	<<Գառնիի Մանկական Գեղագիտական Դպրոց>> ՀՈԱԿ	Տնօրեն	Վարչական	-	1	133000			133000
2		Հաշվապահ	Քաղաքացիական	-	1	77904			77904
3		Դասատու	Քաղաքացիական	-	3	72752			218256
4		Դասատու	Քաղաքացիական	-	5	77904			389520
5		Գործավար	Տեխնիկական սպասարկման	-	1	72752			72752
6		Հավաքարար	Տեխնիկական սպասարկման	-	1	77904			77904
	Ընդամենը				12				969336

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ <<ԳԱՌՆԻԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿՔԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ 2016ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Աշխատակիցների թվաքանակը՝ 16

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	<<Գառնիի Մարզամշակութային կենտրոն>> ՀՈԱԿ	Տնօրեն	Վարչական	-	1	133000			133000
2		Հաշվապահ	Քաղաքացիական	-	1	72752			72752
3		Գեղմասվար	Քաղաքացիական	-	1	77904			77904
4		Մեթոդիստ	Քաղաքացիական	-	2	77904			155808
5		Գրադարանի վարիչ	Քաղաքացիական	-	1	72752			72752
6		Գրադանավար	Քաղաքացիական	-	3	72752			218256

7		Հավաքարար	Տեխնիկական սպասարկման	-	2	72752			145504
8		Պահակ	Տեխնիկական սպասարկման	-	1	77904			77904
9		Խմբավար	Քաղաքացիական	-	4	77904			311616
	Ընդամենը				16				1265496

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ <<ԳԱՌՆԻԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿՔԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ 2016ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Աշխատակիցների թվաքանակը` 28

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	<<Գառնիի Մանկապարտեզ>> ՀՈԱԿ	Տնօրեն	Վարչական	-	1	133000			133000
2		Հաշվապահ	Քաղաքացիական	-	1	86640			86640
3		Հաշվետար գանձապահ	Քաղաքացիական	-	1	77904			77904
4		Գործավար	Տեխնիկական սպասարկման	-	1	77904			77904
5		Ղաստիարակ	Քաղաքացիական	-	4	83400			83400
6		Ղաստիարակ	Քաղաքացիական	-	4	83400			333600
7		Ֆիզկուլտ հրահանգ.	Քաղաքացիական	-	1	83400			62550
8		Երաժիշտ	Քաղաքացիական	-	1	83400			83400
9		Բուժքույր	Քաղաքացիական	-	1	72752			72752
10		Տնտեսվար	Քաղաքացիական	-	1	77904			77904
11		Խոհարար	Տեխնիկական սպասարկման	-	1	72752			72752
12		Խոհարարի օգնական	Տեխնիկական սպասարկման	-	1	72752			72752

13		Լվացքարար	Տեխնիկական սպասարկման	-	1	72752		72752
14		Մեթոդիստ	Քաղաքացիական	-	1	83400		41700
15		Դռնպահ	Տեխնիկական սպասարկման	-	1	77904		77904
16		Պարուսուց	Քաղաքացիական	-	1	83400		62550
17		Դեռձակ	Տեխնիկական սպասարկման	-	1	77904		38952
18		Գիշեր. Պահակ	Տեխնիկական սպասարկման	-	1	73585		73585
19		Օժանդակ բանվոր	Տեխնիկական սպասարկման	-	1	72752		36376
20		Դաստիարակի օգնական	Տեխնիկական սպասարկման	-	2.2	72752		160054
21		Դաստիարակի օգնական	Տեխնիկական սպասարկման	-	2.2	77904		171389
22		Էլեկտրիկ	Տեխնիկական սպասարկման	-	1	77904		38952
	Ընդամենը				30			2008772

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ <<ԳԱՌՆԻԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿՔԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՄՓԵՐԸ 2016ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Աշխատակիցների թվաքանակը՝ 19

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	<<Գառնիի Կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ	Տնօրեն	Վարչական	-	1	133000			133000
2		Հաշվապահ	Քաղաքացիական	-	1	77904			77904
3		Քարտուղարուհի	Տեխնիկական սպասարկման	-	1	73585			73585

4		Գանձապահ գործավար	Քաղաքացիական	-	1	77904		77904
5		Ավագ մենեջեր	Քաղաքացիական	-	1	85132		85132
6		Մենեջեր	Քաղաքացիական	-	3	73585		220755
7		Եռակցող	Տեխնիկական սպասարկման	-	1	85132		85132
8		Փականագործ	Տեխնիկական սպասարկման	-	3	73585		220755
9		Բանվոր	Տեխնիկական սպասարկման	-	1	72752		72752
		Կանաչապատման բանվոր	Տեխնիկական սպասարկման	-	2	72752		145504
		Հավաքարար	Տեխնիկական սպասարկման	-	2	72752		145504
		Պահակ	Տեխնիկական սպասարկման	-	1	72752		72752
		Կանաչապատման և սանիտարական մաքրման պատասխանատու	Տեխնիկական սպասարկման	-	1	73585		73585
	Ընդամենը				19			1484264

1.4 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գառնի համայնքի վարչական տարածքում գործող ոչ համայնքային ենթակայության կազմակերպությունները համագործակցում են համայնքապետարանի հետ և արվում է ամենհնարավորը տվյալ ոլորտներում ծառայությունների արդիականացման և արդյունավետության բարձրացման նպատակով:

1.5 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում աղբը տեղափոխվում և կուտակվում է կենտրոնացված աղբավայրերում, որտեղ պարբերաբար կատարվում են բնահողով ծածկում ու սանիտարական այլ միջոցառումներ: Աղբահանումն իրականացվում է ոչ բավարար տեխնիկայի պայմաններում: Փողոցներում աղբամաններ տեղադրվել են քիչ չափով, և բնակիչներն աղբը դնում են մայթերին, որտեղից աղբահավաք մենքենան հավաքում է: Աղբամանների և աղբահավաք մեքենայի բացակայությունը բացասաբար է անդրադառնում գյուղի արտաքին տեսքի և սանիտարահիգիենիկ պայմանների վրա: **Համայնքի աղբահանությունը կատարվում է Գողթ համայնքի հետ աղբատար մեքենայի օգտագործման շուրջ աղբահեռացման պայմանագրով:**

Համայնքն ունի գլխավոր հատակագիծ:

Համայնքի տարածքում գիշերային (արտաքին) լուսավորության ցանցը ապահովում է համայնքի անհրաժեշտ գիշերային լուսավորության ծածկույթի 15 %-ը: Համայնքի լուսավորությունն առաջնային կարևորության հարցերից է և անհրաժեշտ է կտրուկ ընդլայնել լուսավորության ցանցը:

Խմելու ջրի մատակարարումը համարվում է համայնքի կարևորագույն խնդիրներից ամենաառաջնահերթը:

Առկա է խմելաջրի կապտածների ցանկապատման կամ եղած ցանկապատերի թարմացման խնդիր:

Ստորև ներկայացվում է քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտի իրավիճակներ:

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Բնակելի կառուցապատումն իրականացված է առանձնատներով, առանց հատակագծի: Արդյունքում կառուցապատումն ունի խառը տեսք: Փողոցները կառուցված են թե լայն և թե նեղ: Գտնվում են ռելեֆին համապատասխան: Գառնիում տնամերձ հողամասերի միջին չափը 2000 քմ է:

Համայնքի աղբահանությունը կատարվում է շուրջօրյա: Տեղադրված են որոշակի աղբամաններ, աղբահանությունը սպասարկում է «Գառնի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ը:

Համայնքն ունի օրական 24 ժամյա ջրամատակարարում: Ունի խմելու ջրի 2 ՕԿՋ-եր: Խողովակաշարի ներքին և արտաքին ցանցերը գտնվում են շատ անմխիթար վիճակում: Համայնքապետարանի կողմից կատարվում են ջրագծերի նորոգման և նորացման աշխատանքներ: Սույն ծրագրով նախատեսված է Գառնի համայնքի խմելու ջրի՝ արտաքին

և ներքին ցանցի, նորոգում ինչպես նաև ՕԿՁ-երի նորոգում: Գառնի համայնքի խմելու ջուրը բերված է ինքնահոս եղանակով համայնքի լոկալ աղբյուրներից և դուրս է օպերատորի սպասարկման տիրույթից: Ինքնահոս ջրի անբավարարության պատճառով աղբյուրներից ջուրը մղվում է ջրամղիչ պոմպերի օգնությամբ ինչը մեծ ֆինանսական ծախսերի պատճառ է համարվում:

Բնակավայրը ունի լուսավորության ցանց, որը կառուցված է էներգիա մատակարարող հենասյուների վրա: Անհրաժեշտություն կա հետագայում ընդլայնել լուսավորության ներքին ցանցը:

Գառնի համայնքը գազաֆիկացված է, գազաֆիկացումը շարունակվում է նոր զարգացող թաղամասում:

Համայնքի կապտածները ցանկապատված չեն, անհրաժեշտ է ցանկապատել:

Համայնքի Բանավան թաղամասի բազմաբնակարան շենքերը մասամբ գտնվում են բարվոք վիճակում, անհրաժեշտություն կա որոշ շենքերի տանիքների նորոգման:

Առանձնատների մի որոշ մասը կառուցվել է դեռ 50ական թվականներից և վերանորոգումների հետևանքով դարձել է բավարար բնակելի:

1.6 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 10097,4 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 9264,39 հա, բնակավայրերի հողերը՝ 550,83 հա, արտադրական նշանակության հողերը՝ 63,50 հա, էներգետիկայի, տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակայության հողերը՝ 56,49 հա, անտառային հողերը՝ 51,80 հա, հատուկ պահպանության հողերը՝ 52,78 հա, հատուկ նշանակության հողերը՝ 0,63 հա և ջրային հողերը՝ 56,92 հա:

1991 թվականին հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհման ժամանակ համայնքում սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը ներկայացված է աղյուսակ:

Աղյուսակ. Համայնքում սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Մեկ հողաբաժնի չափը	Այդ թվում՝		
			Տնամերձ և ջրովի վարելահող	Անջրդի վարելահող	խոտհարք
1.	Գառնի	0.425 հա	0.24 հա	0.12 հա	0.065 հա

1.7 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված անջրդի վարելահողերում ցանվում են հացահատիկային մշակբույսեր՝ ցորեն, գարի և այլ կուլտուրաներ իսկ ջրովի վարելահողերում մշակում են գյուղատնտեսական բազմաբնույթ կուլտուրաներ և կատարվում են ծառատնկումներ Հացահատիկային կուլտուրաների արտադրությունն ու անասնապահությունը հանդիսանում են Գառնի համայնքի տնտեսական զարգացման նվազ կանխորոշող ոլորտ: Համայնքում հիմնականում զարգացած է պտղաբուծությունը

Համայնքի բնակիչները զբաղվում են նաև անասնապահությամբ, սակայն խոշոր ֆերմերային տնտեսությունները սակավաթիվ են: Հիմնականում յուրաքանչյուր

տնտեսություն իր արտադրանքը սպառում է իր տնտեսության ներսում: Վերջին տարիներին Գառնի համայնքում «Գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության աջակցման մարզային կենտրոնի» ՊՈԱԿ-ի կողմից աջակցություն է ցուցաբերվում վնասատուների պայքարի և գյուղատնտեսության զարգացման ոլորտում:

Բնակիչների զգալի մասը զբաղվում է մեղվաբուծությամբ:

Համայնքաբնակները իրենց տնամերձ հաղամասերում աճեցնում են բանջարաբոստանային կուլտուրաներ և չի ոռոգվում ոռոգման ջրի պակասության պատճառով:

1.8 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱՆ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում շրջակա բնական միջավայրի պահպանության առումով առաջնային խնդիր է համայնքի սանմաքրումը: Համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- բարեկարգել պուրակները
- կատարել կենտրոնացված աղբավայրը,
- աղբի նախնական տեսակավորման համար փողոցներում տեղադրել աղբամաններ,
- աղբավայրում ստեղծել աղբի տեսակավորման հնարավորություն,
- գյուղմթերքների վաճառքի համար ստեղծել հնարավոր պայմաններ
- համայնքի փողոցներում իրականացնել ծառատունկ, տեղադրել կանգառներ
- ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները,
- ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, տեսագովազդների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

1.9 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԺԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գառնի համայնքն ունի համայնքային ենթակայության ասֆալտապատ և գրունտային ճանապարհներ: Ծանապարհների մեծ մասը հիմնականում գրունտային և խճապատ են, որոնք էլ լինելով թեքությունների վրա, հաճախակի տեղացող հորդառատ անձրևների պատճառով ամբողջովին քայքայվում են և որոշ տեղերում դառնում դժվար կամ գրեթե անանցանելի: Համայնքի տարածքում ճանապարհներից ասֆալտապատ է միայն՝ կենտրոնական ճանապարհներ և որոշակի թաղամասեր տանող ճանապարհները:

Համայնքում կանգառները քիչ են, անհրաժեշտ է տեղադրել բազմաֆունկցիոնալ կանգառներ (ներառյալ ինֆորմացիոն վահանակներ՝ համայնքում մատուցվող ծառայությունների և այլնի մասին, ցուցանակներ, համայնքում գտնվող պատմամշակութային և հետաքրքրաշարժ վայրերի քարտեզներ), որոնք էլ ավելի կխթանեն զբոսաշրջության զարգացումը:

1.10 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գառնի համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի և մասնավոր անձանց և կազմակերպությունների կողմից: Համայնքում գործում են հանրային սննդի խանութներ, հացի փոեր, հանրային սննդի սպասարկման օբյեկտներ, հյուրանոցներ, հյուրատներ, բացօթյա տեղական մթերքների առևտրի կետեր:

Համայնքում չկան գործող ոչ կառավարական կազմակերպություններ (ՀԿ-ներ, հիմնադրամներ, քաղաքական կուսակցություններ և այլն):

Համայնքի տարածքում արտադրական, առևտրային և այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների տվյալները (նաև նախկինում աշխատած) ներկայացված են **հավելվածով**:

1.11 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գառնի համայնքում գործում են հանրակրթական ավագ 1 և հիմնական 2 դպրոցներ, որոնք հիմնանորոգված են:

Համայնքում գործում են մանկապարտեզ, երաժշտական դպրոց, Գեղարվեստի դպրոց, Սպորտ դպրոց, Մարզամշակութային կենտրոն որոնք բոլորը աշխատում են 8 ժամյա աշխատանքային ռեժիմով, մանկապարտեզի սաներին տրվում է երկանգամյա սնունդ: Ավագանու որոշմամբ մանկապարտեզի ծնողական վճարի չափը սահմանված է 4000 (չորս հազար) դրամ: Երաժշտական դպրոցում ծնողական վճարի չափը սահմանված է 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ: Գեղարվեստի դպրոցի սովորողներին 1000(մեկ հազար) դրամ: Մարզամշակութային կենտրոնում սովորողներին 2000 (երկու հազար) դրամ

Աղյուսակում ներկայացված է վերը նշված ուսումնական հաստատություններում աշխատողների և ուսուցանվող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն:

Աղյուսակ. Գառնի համայնքի հանրակրթական դպրոցների, նախադպրոցական ուսումնական հաստատության և արտադպրոցական ուսումնական հաստատությունների վերաբերյալ ցուցանիշները:

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1.	Դպրոցներում աշխատողների թիվը, որից՝	146
	Մանկավարժներ	89
2.	Աշակերտների թիվը	1181
3.	Մանկապարտեզում աշխատողների թիվը	28
4.	հաճախող երեխաների թիվը	125
5.	Երաժշտական դպրոցում աշխատողների թիվը	17
6.	Երաժշտական դպրոց հաճախող երեխաների թիվը	65
7.	Գեղարվեստի դպրոցում աշխատողների թիվը	9
8.	Գեղարվեստի դպրոց հաճախող երեխաների թիվը	65
9.	Մարզամշակութային կենտրոնի աշխատողների թիվը	15
10.	Մարզամշակութային կենտրոն հաճախող երեխաների թիվը	90
11.	Սպորտ դպրոցի աշխատողների թիվը	25
12.	Սպորտ դպրոց հաճախող երեխաների թիվը	300

1.12 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքում գործում է <<Գառնիի առողջության կենտրոն>> ՊՈԱԿ-ը որը արդիական բժշկական սարքերով համալրման, կադրերի վերապատրաստման կարիք ունի: Բուժհաստատությունը հիմնականում իրականացնում է առաջին բուժօգնության ծառայություններ: Տեղի ունեցող հիմնական դեպքերի ժամանակ շտապ օգնությունը հասնում է Երևան քաղաք:

Համայնքապետարանը կազմակերպում և անց է կացնում ներհամայնքային ֆուտբոլի, շաշկու, շախմատի մրցումներ: Համայնքում իրականացվում է տարաբնույթ սպորտային խմբակներ: Սպորտը առավել զարգացնելու համար համայնքն ունի անհրաժեշտ սպորտային դպրոց: Համայնքի տարածքում սպորտդահլիճներ առկա են դպրոցներում, սակայն գրեթե բոլոր սպորտդահլիճներում պակասում է համապատասխան գույքը: Առկա են բացօթյա խաղահրապարակներ, որտեղ տեղադրված են ֆուտբոլի, վոլեյբոլ և վասկետբոլ խաղալու համար համապատասխան սպորտային գույք:

1.13 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Քանի որ համայնքի տարածքում չկան գործող մեծ գործարաններ կամ արտադրամասեր, ուստի բնակչության աշխատանքի տեղավորվելու և աշխատելու հույսը մնում է միայն՝ համայնքապետարանում, ՀՈԱԿ-ներում, դպրոցներում, Գառնիի հեթանոսական տաճարում, գործող փոքր ՀԷԿ-երում, քիչ թվով գործող և սակավաթիվ աշխատատեղեր ապահովվող ՊՈԱԿ-ներում, հանրային սննունդ սպասարկող հիմնականում սեզոնային օբյեկտներում և Երևանում տարաբնույթ աշխատանքները:

Համայնքի ծնողագուրկ, հաշմանդամ և սոցիալապես ծանր վիճակում գտնվող երեխաներին Գառնի համայնքապետարանի տրվում է նյութական օգնություն:

Համայնքապետարանը հնարավորությունների շրջանակներում օգնություն է ցուցաբերում սոցիալապես անապահով ընտանիքներին: Համայնքապետարանի սոցիալական աշխատողը պարբերաբար վիճակագրությունով վեր է հանում համայնքի խոցելի խմբերին և ներկայացնում նյութական օգնության:

Աղյուսակում ներկայացված են համայնքում եղած աշխատունակ և գործազուրկ մարդկանց, նպաստառու ընտանիքների, հաշմանդամների և ծնողագուրկ ու հաշմանդամ երեխաների վերաբերյալ ցուցանիշներ:

Աղյուսակ Գառնի համայնքի աշխատունակների և գործազուրկների, նպաստառու ընտանիքների, հաշմանդամների և ծնողագուրկ ու հաշմանդամ երեխաների վերաբերյալ ցուցանիշները

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք
1.	Միակողմանի ծնողագուրկ երեխաներ	28
2.	Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ	5
3.	Հաշմանդամներ, այդ թվում՝	108
4.	Մանկուց հաշմանդամներ	5

5.	Աշխատունակներ	4650
6.	Զբաղվածներ	3890
7.	Գործազուրկներ	360
8.	Ընտանեկաննպաստներիպետականհամա կարգումգրանցվածընտանիքներիթիվը	200

1.14 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքապետարանը ստեղծել է իր պաշտոնական վեբ կայքը՝ www.kotayq-garni.am, որի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը և բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը: Սակայն, կայքում տեղական ինքնակառավարման վերաբերյալ տեղեկատվության առկայությունը դեռևս հեռու է բավարար լինելուց և անհրաժեշտ է բարելավել կայքի աշխատանքը, բարձրացնել օպերատիվությունը: Համայնքապետարանում և բնակավայրի կենտրոնական հատվածներում տեղադրված են տեղեկատվական ցուցատախտակներ, որոնց միջոցով ապահովվում է համայնքի ղեկավարի եւ ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

Համայնքի ավագանին.

- ✓ 17.05.2016 20-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը»
- ✓ 17.05.2016թ. N 18-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը»
- ✓ 17.05.2016թ. N 19-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»:

Ավագանին 30.05.2016թ. N 21-Ա որոշմամբ հաստատել է համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման, քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտային հարցերի, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության և սպորտի հարցերով խորհրդակցական մարմնի (ԽՄ) կազմը:

1.15 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, Քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության, մասնավոր հատվածի մի շարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, սանիտարա-հիգիենիկ ծառայությունների և այլ ոլորտներից), առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Գառնի համայնքի քաղպաշտպանության շտաբի պետնի պաշտոնե համարվում է համայնքապետը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են քաղպաշտպանության շտաբի առանձին ծառայությունները՝ ծառայությունների պետերի համակարգմամբ:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման գործում բնակչության է վակուացման համար մշակված է պլան, համապատասխան որի, բնակելի, հասարակական շենքերի, մյուս շենքերի ու շինությունների համար նախատեսված է հարմարավետ մոտեցումներով աշխատանքների տարման կոմունիկացիոն սխեմաներ: Համայնքում եղած թաքստոցները հաշվառված են համայնքապետարանի կողմից: Անհրաժեշտություն կա թաքստոցները ավելացնել բնակչության թվին համապատասխան: Սահմանված է վրանային ավան տարածքը որտեղ պետք է տեղափոխվեն տարահանված բնակիչները:

1.16 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱԴԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրի ձևավորումն ապահովող և հետագայում այդ միջավայրը զարգացնող կազմակերպությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է

N	Ձեռնարկության անվանումը		Գործունեության տեսակը	ղեկավարի անուն, ազգանունը	Ձեռնարկության հասցեն	Ձեռնակատ իրոջ հեռ. համարը	
1.	«Միքայել և Մանուել»	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Աբելյան Աշոտ	գ.Գառնի Երևանյան 25	091415128	
2.	«Զաղաց»Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Հարությունյան Վահագն	գ.Գառնի Խ.Աբելյան 11	099030228	
3.	Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Եսայան Արտավազդ	գ.Գառնի Երևանյան 9	077555515	
4.	Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Վախրամյան Հասմիկ Մ	գ.Գառնի Զ.Ալեքյան 43/1	096010401	
5.	Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Բառոյան Արեիկ	գ.Գառնի Զ.Ալեքյան 27/1	099387008	
6.	Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Մելքոնյան Ավետիք	գ.Գառնի Ա.Բաբաջանյան 29	-----	
7.	Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Բաղդասարյան Վիապ	գ.Գառնի Ս.Շահումյան 36	091939200	
8.	Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Ստեփանյան Ռոմիկ	գ.Գառնի Մուրադյան եղբ.19	091499968	
9.	Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Պապիկյան Արշավիր	գ.Գառնի Գեղարդի խճ.6	091568900	
10.	Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Ստեփանյան Վաթագդատ	գ.Գառնի Գեղարդի խճ.33/1	099499968	
11.	Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Սահակյան Արթուր	գ.Գառնի Զ.Անդրանիկի 1	091722944	-----
12.	Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Մարկոսյան Արեն	գ.Գառնի Հ.Թումանյան փակ 1տ1	094202300	
13.	Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Հովհաննիսյան Ռոզա	գ.Գառնի Գեղարդի խճ.60	094545653	
14.	Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Գրիգորյան Ալեքսան	գ.Գառնի Գեղարդի խճ.39	098018413	
15.	Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Խաչատրյան Մելիք	գ.Գառնի Մ.Բաղրամյան 49	099146474	
16.	Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Ներսիսյան Ռուբիկ	գ.Գառնի Խ.Արուսյան փակ.4 N4	096895466	-----
17.	Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Մաքսյան Սեդրակ	գ.Գառնի Զ.Ալեքյան14	094812965	
18.	Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Գևորգյան Գրիգոր	գ.Գառնի Մ.Մաշտոցի1	091749263	
19.	Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Խաչատրյան Շողիկ	գ.Գառնի Մարգարետունի 15	094666380	
20.	Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Մարկոսյան Սիրուն	գ.Գառնի Վ. Սարոյան 4	091923329	
21.	Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Սահակյան Մարգարիտ	գ.Գառնի Զ.Ալեքյան 3	091668006	
22.	Ա/Ձ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Իսախրյան Վահե	գ.Գառնի Բաղրամյան 17	091828210	

23.	Ա/Չ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Կարապետյան Դերենիկ	գ.Գառնի Խ.Աթուլյան 54	091746867	
24.	Ա/Չ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Հովհաննիսյան Խաչատուր	գ.Գառնի Խ.Աթուլյան 17	093128486	-----
25.	Ա/Չ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Ավագյան Աննա Ս.	գ.Գառնի Մ.Մաշտոցի 29		-----
26.	Ա/Չ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Պողոսյան Կամո Վ.	գ.Գառնի Գեղարդի խճ.1	091263726	
27.	Ա/Չ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Սարիբեկյան Քնարիկ	գ.Գառնի Ջ.Ալեքյան 38	099231920	
28.	Ա/Չ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Գալստյան Դերենիկ	գ.Գառնի Բաղրամյան 46/1	094843797	
29.	Ա/Չ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Գևորգյան Վահան	Գ. Գառնի Նաբեկացու 1	094101718	
30.	Ա/Չ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Մնացականյան Ռոզա	գ.Գառնի Գեղարդի խճ.37/2		
31.	Ա/Չ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Գրիգորյան Վաչագան	Ս. Շահումյան	096655558	
32.	Ա/Չ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Հակոբյան Անդրանիկ	Գ. Գառնի Կամոյի 1		
33.	Ա/Չ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Բաբայան Գառնիկ	Գ. Գառնի Գ. Մարգարետունի 14		
34.	Ա/Չ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Բաղդասարյան Արայիկ Գ	Գ. Գառնի Բանավան		
35.	Ա/Չ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Գրիգորյան Նիկողայոս	2-րդ թաղ. 3-րդ փող 4		
36.	Ա/Չ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Համբարձումյան Մտեփան Ն	Գեղարդի խճղ. 38	091645465	Բաց. 01.06.2016
37.	Ա/Չ	Կապ.կառույց	մանրածախ առևտուր	Նարինե Գևորգյան Ա	Գեղարդի խճղ. 68	096144484	Բաց. 01.10.2016
38.	Կապ.կառույց	Հագուստի առևտուր	մանրածախ առևտուր	Մուրադյան Գայանե	գ.Գառնի Գեղարդի խճ.35/1	096800869	
39.		Հագուստի առևտուր	մանրածախ առևտուր	Հովհաննիսյան Տաթևիկ	գ.Գառնի Երևանյան փ.28/2	096106101	
40.		Հագուստի առևտուր	մանրածախ առևտուր	Խաչատրյան Արման	գ.Գառնի Գ.Մարգարետունու 22		
41.		Կահույք	մանրածախ առևտուր	Մարտիրոսյան Արման	գ.Գառնի Գ.Մարգարետունու21		
42.	ԵԿՍԱ Ա/Չ	Կապ.կառույց	Կաշվի արտադրամաս	Եղիազարյան Գագիկ	գ.Գառնի Գ.Մարգարետունու 32	077235695	
43.	«Հացագործ Անդրանիկ» ՍՊԸ	Կապ.կառույց	հացի արտադրություն	Հակոբյան Անդրանիկ	գ.Գառնի Կամոյի 1		
44.	«Գառնի» ՍՊԸ	Կապ.կառույց	Դեղատուն	Ավագյան Արուսյակ	գ.Գառնի Ջ.Ալեքյան 22	091561240	
45.	«Միքայել և Մանուել»	Կապ.կառույց	Դեղատուն	Աբելյան Աշոտ	գ.Գառնի Երևանյան 25/1	091415128	
46.	ԱՆԵԼԿԱ Ա/Չ	Կապ.կառույց	Գրավատուն	Մկրտչյան Արտաշես	գ.Գառնի Ջ.Ալեքյան 28	-----	
47.	ԱԳԼՃԿ	Կապ.կառույց	Գազի լցակայան	Մկրտչյան Արտաշես	գ.Գառնի Ազատամարտիկների փ.	094728800	
48.	-----		Բենզինի կետ	Ստեփանյան Սպարտակ	գ.Գառնի Ջ.Ալեքյան	099585060	
49.	-----	Կապ.կառույց	Բենզինի կետ	Բաղդասարյան	գ.Գառնի Ազատամարտիկների փող.	099888803	

				Եղիազար			
50.		շարժական	Հեղուկ գազ	Բաղդասարյան Վաղինակ			
51.	«Տաճար»Ս ՊԸ	Կապ.կառույց	Հանրային սնունդ	Բաբայան Հմայակ	գ. Գառնի Մարզպետունու փ.8	091202757	
52.	Ա/Չ	Կապ.կառույց	Հանրային սնունդ	Լևոնյան Արզամ	գ. Գառնի Մարզպետունու փ.	094101817	
53.	Իշխանանոց	Կապ.կառույց	Հանրային սնունդ	Գրիգորյան Ամբակում	գ. Գառնի	093050504	
54.	Ա/Չ	Կապ.կառույց	Հանրային սնունդ	Գաբրիելյան Սերյոժա	գ. Գառնի Զ.Ալեքյան փ.3-րդ փկղ թ2	091528087	
55.	Գառնի ռեստորան ,7 քաբե ՍԷԼ ՍՊԸ	Կապ.կառույց	Հանրային սնունդ	Նիկողոսյան Արթուր վարձակալ	գ. Գառնի Գ.Զոհրապի 30	041040002	
56.	,Մեր օջախե ՍՊԸ	Կապ.կառույց	Հանրային սնունդ	Կիրակոսյան Անդրանիկ	գ. Գառնի Գ.Զոհրապի 31	091195932	
57.	,Գառնի տունե	Կապ.կառույց	Հանրային սնունդ	Մանվել Տեր - Առաքելյան			-----
58.	, Բաշ Գառնիե	Կապ.կառույց	Հանրային սնունդ	Մոդոյան Վարազ	Գ. Գառնի		
